ԲՅՈՒԼԵՏԵՆ

Հուլիս 2025թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Որակավորման հանձնաժողով

Որակավորման հանձնաժողովը գումարել է 1 նիստ՝ 29.07.2025թ.-ին, որում աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում է շնորհվել 6(վեց) անձի և մերժվել է 1(մեկ) անձի աուդիտորի որակավորում շնորհելու դիմումը :

Անդամակցության հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է 1 նիստ՝ 27.06.2025թ.-ին, որում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին՝ հաստատելու ընդհանուր թվով 13 (տասներեք) ֆիզիկական անձանց անդամակցությունը Պալատին:

ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

21.07.2025թ.-ին տեղի է ունեցել «Earned Value Analysis (EVA)՝ նախագծի ծախսերի և ժամկետների շեղումների կանխատեսման և կառավարման գործիք» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ֆլորա Գրիգորյանը:**



124.07.2025թ.-ին տեղի է ունեցել «ՖՀՄՍ 18 – Ֆինանսական հաշվետվություններում ներկայացումը բացահայտումը» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ավետիք Մովսիսյանը:**



30.07.2025թ.-ին տեղի է ունեցել «Կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի կիրառում» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Նաիրուհի Ավետիսյանը:**



Որակավորման քննությունների ամփոփում

2025թ. հուլիսի 1-ից մինչև հուլիսի 9-ը տեղի են ունեցել Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի որակավորման ծրագրի ամառային քննաշրջանի քննությունները:
Արձանագրվել է **857** մասնակից: